Տնտեսական համագործակցության հարցերով հայ-բելառուսական միջկառավարական համատեղ հանձնաժողով

Տնտեսական համագործակցության հարցերով հայ-բելառուսական միջկառավարական համատեղ հանձնաժողովը հիմնվել է համաձայն 2000թ. հունվարի 18-ին կնքված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Բելառուսի Հանրապետության կառավարության միջև ազատ առևտրի մասին» Համաձայնագրի: Հայկական կողմից հանձնաժողովի համանախագահն է՝ ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարը: Հայ-բելառուսական միջկառավարական համատեղ հանձնաժողովի անդրանիկ նիստը կայացել է 2000թ.-ին Մինսկում: 13-րդ նիստը նախատեսվում է անցկացնել Մինսկում 2017 թվականի աշնանը: